

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունուում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնները համար վճարում են
խրաւանջիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1899 ԹԱՎԱՆԻ

ՄՇԱԿ

(27-րդ ՏԱՐԻ)

ԻՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՎՂՈՒԹԱՄԲ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ. «Մ» չափի տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի ամսականը՝ 1 ռուբլի:
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԱԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամբիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 ռուբլի. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:
«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՐԱՎԱՐԱՏԱՆԸ (Բաղրամյան և Բարձրակայան փողոցների անկիւնը).
Կայսրութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է զիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“; իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունուում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Լուրջ վերաբերմունք.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլ, Իշխան Իշխան ձախձախաձէ և հայերը.
Նամակ Մեծ-Արարելիսայից. Նամակ Կարսի չրջանից. Նամակ Ալեքսանդրօպոլից. Նամակ Բալթիստից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի կտոր արաբական պատմագրութիւնից:

ԼՈՒՐՁ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԴ

Մեր ընթերցողները անկասկած ուշադրութիւն դարձրին այն նամակների վրա, որոնք տպվեցին «Մշակի» 61 և 62 համարներում «Քարահունջ» ընկերութեան մասին: Ծաւալի կը լինի, թէ՛, արդարեւ, ընկերակցութիւններ կազմելու առաջին մեծ փորձերից մէկը անաջողութեան հանդիպի և այդպիսով քիչապի մի համակրելի գործ: Մենք հաւատացած ենք, որ «Քարահունջ» ընկերութեան բաժնետէրերը

ամեն ճիշդ կը թափեն, որպէս զի սկսած ձեռնարկութիւնը կարողանայ փտահալութիւն ներշնչել և հանգստացնել այն վրդոված գրութիւնը, որ առաջ է եկել մի քանի հիասթափեցնող հանգամանքներից:
Ներկայ ընկերութեան մէջ մասնակցութիւն ունեն փոքր դրամադուրի ներկայացուցիչներ, մեծ մասամբ գիւղացիներ: Եթէ այդ տեսակ մի ընկերութիւն աջողութեամբ պսակի իր փորձը, նա գեղեցիկ օրինակ կը դառնայ ոչ միայն Բագուի նրման մի կենտրոնում, այլ և գիւղական շրջանում: Երանդ նոյնպէս մեծ անհրաժեշտութիւն կայ հաւաքական ոյժերով գործ կատարելու: Մեր երկրի ընդարձակ տարածութիւններ մնում են անբարեկարգ և ամայի վիճակի մէջ յաճախ հէնց այն պատճառով, որ ընդհանուր գործակցութիւն պահանջող ձեռնարկութիւնները չեն կազմակերպվում գործնական ձևով: Ամեն մի գիւղացի լաւ զգում է, որ նա կարող էր իր տնտեսութիւնը բարւոքել, եթէ,

օրինակ, առու անցկացնէր հեռաւոր առատածուր գետից դէպի իր ցամաք դաշտը, շինէր յարմար ձանապարհներ կանոնաւոր հաղորդակցութեան համար, կառուցանէր կոմուրժներ անմեղմանալի ձորերի և վիհերի անյարմարութիւնները ոչնչացնելու համար. այդ բոլորը նա գիտէ, բայց նա սովոր չէ իր հարեանների հետ միասին խմբել և ընդհանուր ջանքերով մի անհրաժեշտ գործ կատարել:

Մեր ընկերակցութիւնները զանազան թիւրիմացութիւններից ազատ մնալու համար պէտք է մշակեն հաշուետուութեան նպատակայարմար միջոցներ, որպէս զի իւրաքանչիւր բաժնետէր կարողանայ ամեն նաստոյգ տեղեկութիւն ունենալ գործերի ընթացքի մասին և երթակայ չը լինի զանազան լուրերի ազդեցութեան: Անկասկած, ընկերակցութիւնները, ունենալով իրանց ձեռքին արդիւնազորական ձեռնարկութիւն, վարդերի հետ պէտք է երթադրեն և փուշերի ներկայութիւնը և պէտք է կարողանան տանել ժամանակաւոր անաջողութիւններ: Այդ հեշտ կը լինի իւրաքանչիւրի համար, երբ նա գիտակ է գործերի ընթացքին և հաւատացած է, որ ընկերութեան ղեկավարները իրանց կողմից ամենամեծնուէր կերպով հոգում են ընկերութեան շահերի մասին և եղած անաջողութիւնը հետևանք է ոչ թէ անհոգութեան, այլ անխուսափելի հանգամանքների:

Շատ ցանկալի է, որ մեր մատուց ընկերակցութիւնների ղեկավարները վերին աստիճանի բժականոր լինէին դէպի գործակարական մասը և աջող տանելով հաւաքական գործակարութեան առաջին փորձերը, նպաստէին ընկերակցութիւնների տարածման և հաստատութեան մեր երկրում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մենք էլ կամայ կամայ գալիս ենք այն եղբայրակցութեան, որ կարօտ խեղճերն օգնելու միջոցը շատ է հնացել, արդարութեան դադար փարին շատ է անհասպատասխան: Ամենահին ժամանակներից մարդը սովորել է մուրացկանութեան. և ո՞վ գիտէ, որ ժամանակից է ունեւորը սկսել հասկանալ, թէ մուրացկանի պէտք է մի կտոր հաց կամ մի գրոշ տալ: Արեւմտեան

Եւրոպայում նոր չեն հասկացել, որ օգնութեան այդ ձևը թէ վնասակար է հասարակական տեսակետից և թէ անպատասխան է մարդկայնութեան բարձր գաղափարի տեսակետից: Ողորմութիւն տալ նախ և առաջ ձրիակերութեան դուռ է բաց անում և հազարաւոր մարդկանց համար հէնց ապրելու միջոց է դառնում. մի և նոյն ժամանակ ողորմութիւն տալ ստորացնում է ողորմութիւն ստացողի մարդկային արժանաւորութիւնը. անհատը, տնտիւրը դարձելով մարդ է, որ ունի ընդունակութիւն գործելու իբրեւ մարդ, սեփական աշխատանքով մի կտոր հաց կարող է գտնել: Սե այս սկզբունքը, որ նոր ժամանակների մշակած ճշմարտութիւններից մէկն է, ամենին չէ ոչնչացնում զթաւարութեան, ողորմածասիրութեան զգացմունքը, որ ամեն տեղ, բոլոր ազգերի և ժամանակների բարոյական հասկացողութիւնների հիմքն է կազմել և կազմում է: Ընդհակառակն, ներկայումս աղքատներին խնամելու գործը աւելի լայն հիմքերի վրա է դրվում, դառնալով ոչ թէ առանձին առանձին անհատների տրամադրութեան գործ, այլ ընդհանուր հասարակական պարտաւորութիւն: Հասարակութիւնը պատաւոր գործ է ստեղծում իսկական դժբաղդների համար, տալիս է նրանց միջոց ապրել սեփական աշխատանքով: Այդպէս վարվել պէտք է այնպիսիների հետ, որոնք առանց ուրիշ օգնութեան կորած, ոչնչացած են: Բայց մի և նոյն ժամանակ, այդ իսկական խեղճերին օգնելու գործը նշտացնելու համար, հասարակութիւնը կուր և մղում արհեստ դարձրած, պրօֆեսիօնալ աղքատութեան դէմ: Դա չարիք է, որ իւրաքանչիւր բարեկարգ հասարակութիւն պիտի վերացնէ իր միջից: Արդարադատութեան միջնակցութիւնը, ինչպէս յայտնել ենք ժամանակին «Մշակի» մէջ, կազմել է մի յանձնաժողով, որ պիտի մշակէ այն հարցը, թէ ինչ միջոցներով կարելի է կուր պրօֆեսիօնալ մուրացկանութեան դէմ Ռուսաստանում: Թանձնաժողովը հաւաքել է նիւթեր և դրանց մի մասը արդէն հասարակված է: «НОВОСТИ» լրագրի աշխատակից պ. Օրօշնիկի բերում է այդ տեղից մի քանի հետաքրքրական պատմեր: Արհեստ դարձած աղքատութեան կատաղած միայն ծուրկութիւնը չէ, այլ և այն, որ այդ արհեստը բաւական շահաւէտ է:

Սովկայի կեանքը հետազոտողներից մէկը հաստատում է, թէ այնտեղ փորձված աղքատը մի օրում 3 ռուբլի է աշխատում: Մի քանի գիւղերում, ուր գոյութիւն ունի պրօֆեսիօնալ մուրացկանութիւնը, մի քանի ձարպիկներ աշխատում են տարին մինչև 300 և նոյն իսկ 1000 ռուբլի: Թէ որքան ձեռնուում է մուրացկանութիւնը Սովկայում, ցոյց է տա-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԻ ԿՏՈՐ ԱՐԱԲԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

(Ներքին հայոց պատմութեան համար)

Թորանանի մէջ թափվող փոքր գետերից մէկը Եւրօսուրն է՝ Մեծեալ ծովի մօտերը: Այդ գետի եզերքին Քրիստոսի 634 թվին մի մեծ ճակատամարտ տեղի ունեցաւ յոյների և արաբների մէջ, որի հետեանք եղաւ ամբողջ Սիրիայի կորուստը:
Արաբական պատմագիր Վազըրի նկարագրում է այդ պատերազմը, որից մի կտոր այստեղ ենք բերում թարգմանաբար:
Հեղինակի բուն անունն է Էբու-Աբդալլահ Մուսամմէդ իբն Օմար իբն Վազըր-է-Վազըրի: Այդ անձի մասին պատմութեան մէջ մնացած տեղեկութիւնները շատ ցիւրի են. նա ծնվել է հիւրային 131 թվի սկզբին (748 թվին) և զիւր-հէճէի 11-ին 207-ին (823 թվի ապրիլի 23-ին), մեռել է իբրեւ Բաղդադի դատաւոր: Շատ պատմութիւններ են վերագրված այդ անձին, բայց շատը չիմո՞ւ է: Ոճը բաղադրներումը տաքացած պատմութիւն անող ղերվիչների ոճն է և արժէքն էլ նրանցից ոչ առաւել:

Եւրօսուրն ճակատամարտի պատմութիւնը արաբներէնից ձեղապէս թարգմանված այսպէս է:
«Այսպէս ասեց Վազըրին. Աստուած ողորմի նրան».

«Եւ լուր հասաւ Հերակլիոս կայսրին, թէ մասնակցանները արդէն առել են Նմեսսան, Ռասթիւն և Երզնէրը և յափշտակել են այն ընծաները, որ նրա համար ուղարկել էր Հէրբուս իշխանը. և այս լուրը եկաւ հասաւ նրանից, առանց նրա անձամբ ներկայանալու: Ուստի կայսրը ըստ պատմւ էր այնտեղ այն զօրքերին և զինուորներին, որ ամբողջ յոյն կայսրութեան երկրներից պիտի գային, որովհետեւ այս մասին արդէն հրովարտակ էր ուղարկել խաչի նշանը իր վրա բոլոր կողմերին: Եւ շատ չանցած ահա ժողովվեցին, գումարվեցին նրա մօտ բոլոր զուորքերը: Անտիոքից սկսելով մինչև Մենն Հռոմը: Այս զուորքերից մէկը ուղարկեց նա Սիրիայի ծովագետը, որ պահպանէր Աքքա և Տրեբիս, և մի ուրիշը ուղարկեց Նրուսադէս. իսկ կայսրը մնաց այնտեղ և սպասում էր հայոց թագաւոր հայ Մասանի զօրքին: Հերակլիոս թագաւորից առաջ և ոչ մէկը հայերից այնքան զօրք ժողոված չէր: «Մի քանի օրերից յետոյ Հերակլիոս կայսրը իր իշխաններով միասին նրան ղիմաւորելու գնաց, և երբ բաւական մօտեցել էր, Մասանը իր զօրքը վար իջան իրանց ձիաներից և զոհեր մորթվեցին նրա առաջ և իրանց ձայները

բարձրացնելով սկսեցին լալ այն ամեն աղէտներ, որ պատճառով, որ հասել էին նրանց երկրներին միւսիւրեմանների յաղթութիւններից: Բայց կայսրը արգելեց նրանց լալ և ասեց. «Ով քրիստոնէաներ, ով մկրտվածներ, ես ձեզ քանիցս զոհաբերեցի զգուշացնելու էի այս արաբներից, ինչպէս զէրը ընդունում: Հիմա Մեսիայի ճշմարտութիւնովը և ճշմարիտ ինձիւրովը, պատաւովը և մկրտութեան աւագանովը երդվում եմ, որ արաբները պիտի առնեն նոյն իսկ իմ այս աթոռիս տալիս անդամ: Եւ այդ լալը միւսիւրեման կանանց է վայելում. իսկ ես ձեզ համար այնքան զօրք եմ ժողովել, որ աշխարհիս թագաւորներից և ոչ մէկը կարող է յաղթել ստացւածը և բոլոր իշխաններս զոհ եմ բերել, և այս ամենն արել եմ միայն այն մտքով, որ ձեզանից, ձեր կրօնքից և ձեր ընտանիքից հեռացնեմ վտանգը: Ուրեմն ապաշխարեցէ՛ք Մեսիայի առաջ, ուրիշեցէ՛ք ձեր հպատակներին բարիք անել և նրանց չը զրկել, և պատեալովում տուր ինչ որ եղէք. միմեանց հետ էլ մի հարեք. զգուշացէ՛ք ինքնահաւանութիւնից և նախանձից, որովհետեւ ուր որ այս երկու մոլորութիւնները մուտ գտան, այնտեղ կ'ստնէ նաև երկչոտութիւնն ու վատութիւնը: Արդ ուղում եմ ձեզանից մի բան հարցնել և ուղում եմ, որ պատասխանէք ինձ: Յուսաց իշխանները և թագաւորները ասեցին, «հարցնու, ով կայսր, ինչ որ ուղում ես հարցնել:»

Եւ կայսրն ասաց, «Ահա դուք այսօր թուով աւելի և քանակով շատ էք արաբներից, ձեր ժողովըրդ աւելի մեծ է և ձեր վրանները աւելի բազմաթիւ և ձեր սլոք աւելի շատ, բայց ասեցէ՛ք ինչից է այդ ձեր վրա տիրող երկիւղն ու սարսափը. չէ՞ որ պարսիկներից, թուրքերից և ձերականերից ձեզ ոտնահար եղան և լաց ու կոծ էին անում ձեր զարնուրանքից. և նրանք շատ անգամ թէև յարձակումներ արին ձեր վրա, բայց ամեն անգամ էլ ջարդված յաղթվեցին: Սակայն հիմա դուքս են եկել ձեր վրա այս արաբները, մի շատ տկար ժողովուրդ, մերկ-տկուր, ոչ մեծ է նրանց թիւը, ոչ էլ ունեն զէնք, բայց և այնպէս յաղթեցին ձեզ: Բասարայում, Հաուրանում, Էճնադենում, Դամասկոսում, Բաալբէքում և Նմեսսայում»:

Կայսրը խօսեց և իշխանները լուռ մնացին ու պատասխան չը տուին:
Այնտեղ մի երեւելի և քրիստոնէական հաւատքին քաջ հմուտ քահանայ բարձրացաւ ու ասեց. «Ով կայսր. միթէ չը գիտես թէ արաբները ինչո՞ւ համար մեզ յաղթեցին: Կայսրն ասեց. «Ընդունում եմ Մեսիայով, որ չը գիտեմ: Քահանայն ասեց. «Ով կայսր, նրա համար, որ մեր ժողովուրդը հաւատարիմ չը մնաց իր հաւատքին, իրանց վարքերը փոխեցին, անհնազանդ դառնվեցին Մարիամի որդի օրհնեալ Յիսուս Մեսիային, իրար դէմ անխառնացին, և

ին հետևեալ փաստը: Մի արհեստանոցի տէր իմացաւ, որ իր մի բանորրը, ստանալով օրա-վարձ 1 ռուբլի 25 կոպէկ, այնու ամենայնիւ, Մինչեւան տօններն և Ձատկին արձակուրդ էր խնդրում և գնում էր ողորմութիւն խնդրելու, որովհետեւ այդպիսով նա օրեկան 3 ռուբլուց աւել էր աշխատում:

Այդպիսի երևոյթներ, ի հարկէ, ամեն տեղ կարելի է գտնել, եթէ հետազոտութիւններ կա-տարվեն: Ինչ է ցոյց տալիս այդքան մեծ փորձը:

Այս տեսակ դէպքեր պայցուցանում են ողորմութիւն տալու կատարեալ անպատակա-յարմարութիւնը, երբ նա չէ ըզլնում մուրաց-կաններն խնամելու կազմակերպած սխտե-մից: Այդպիսի ողորմութիւնը ստեղծում է ոչ միայն մուրացկանութեան արհեստ, այլ և գիտութիւն: Մտկոլկայում կան ուրացկանների ամբողջ ակադեմիաներ, տեղեկատու գրասե-նեակներ, որոնք սովորաբար սարքվում են զինաներում և այլն:

Վիճակագրական տեղեկութիւնների վրա հաշուած է, որ պրօֆէսիօնալ աղբատներին ա-մեն տարի Ռուսաստանում ողորմութիւն է տըր-վում 27,375,000 ռուբլի: Բայց սա փոքրով ար-ւած ողորմութիւնն է: մինչեւ գիւղերում աղ-բատներին տալիս են զանազան միջոցներ, ո-րոնց արժողութիւնը սովորական ողորմութիւնից մեծ է: Հաշուելով և այդ ողորմութիւնը, դուրս կը գայ, որ Ռուսաստանը մի տարում աղբատներին տալիս է մի անգինի գումար (միայն գիւղացի-ները տալիս են հարիւր յիսուս միլիօն): Այդ յօժարեալ տուրքը այնքան խոշոր է, որ մեծ դժուարութիւն չի լինի աւելի խելացի և կանօնաւոր կազմակերպութիւն ստեղծել աղ-բատներին օգնելու գործի համար: Արդարու-թիւնը այդ է պահանջում: Այն ժամանակ ար-հեստով աղբատը չի ծօր հասարակութիւնը, իսկ նա, որ իսկապէս արժանի է խնամքի, չի խելո-վի դժբախտութեան մէջ...

Վովկասեան ռուսաց մամուլի մէջ վերջին տա-րիներս ծագած բանահիւրների առիթով «ВАС-ШЕКА» լրագիրը շատ իրաւացի կերպով նկատում է, որ այդ բոլոր վէճերը վաղուց ձանձրացրել են ընթերցողներին, վաղուց անտանելի են դարձել:

Մեզ հետաքրքրում են բոլորովին ուրիշ բա-նքի: Մենք ունենք ընդհանուր կարիքներ, ստիպողական կարիքներ: Մեզ ճշտում է մի և նոյն ծանոթը, խելացի է մի և նոյն միջո-րդը: Նրանց մասին գրեցի, պարոններ, նրանց դէմ կռուեցէ... Քող կուի լոյսը խա-ւարի դէմ, ուղղութիւնը ուղղութեան դէմ, համոզմունքը համոզմունքի դէմ և ոչ թէ անձ-նաւորութիւնները անձնաւորութիւնների դէմ:

Մեր հրապարակաստներին երկինքը վա-ղուց է գրկել այդ չնորհքից: Ինչպէս կարելի է մտածել երկրի ընդհանուր շարժի մասին, ին-չու մտածել թէ ժողովուրդը խելոված է տգի-տութեան մէջ և նրան պէտք է ազատել այդ եղբայրական գերութիւնից, աղնաբար ծառայե-լով տալարական խօսքին: Ինչու ասել, երբ կարելի է հեշտութեամբ միմեանց միս գզգզել, վէճեր յարուցանել ամբողջ դատարկ հարցերի վերաբերմամբ, որպիսիներից մէկն է, օրինակ, այն, որ մի խմբագիր պաշտօն է ստացել մի-դրամական հաստատութեան մէջ: Ամբողջ ցաւը նրանում է, որ մեր հրապարակաստների մէջ շատերը կան, որոնք այն մօլորութեան մէջ են թէ պէտք է ընթերցողին տալ ոչ թէ առողջ մտաւոր մոտեցող, այլ պղպեղ, քաջախ, խարդալ:

Նրանց մէջ մէկը չը կայ, որ նրանց դէպի բա-նքի առաջնորդէ, կամ չարիցը հրամարեցնէ: Նրանց մէջ արդարութիւն և ողորմութիւն չը կայ, հնազանդել չը գիտեն, ազդեքի ժամանակ-ները փնայնում են, վախճաւու են, շնորհիւն են գործում և ամեն տեսակ մոլութիւններն ու ոճրագործութիւնները տարածված են նրանցում: Իսկ այս արարները հնազանդութիւն են իրանց Աստուծուն, հետևում են իրանց կրօնին, զի-չերն աղօթքով, ցերեկը ծոմով են անցկացնում և իրանց Աստուծոյ յիշելուց չեն դադարում: գովում և փառաբանում են իրանց մարգարէին, չը կայ նրանց մէջ ոչ անիրաւութիւն, ոչ թշ-նամութիւն: մէկը միւսին դէմ չի ամբարտաւանա-նայ: Իրանց գործերը հաւատարմութիւն, և զբաղմունքները աղօթք են, եթէ յարձակվում են մեզ վրա, ետ չեն դառնայ, և եթէ մենք յար-ձակվում ենք նրանց վրա, իրանց մէջը մեզ չեն դարձնի: Նրանք արդէն դիտեն, որ այս աշխար-հըս անցող գնացող է, իսկ մնացողը գալու աշ-խարհն է:

Վաղըզին ասում է. երբ որ ժողովուրդը և Հերակլիտոս կայսրը լսեցին, թէ ինչ ասեց քա-հանան, ասեցին: Մեծախոյով երդվում ենք, որ իրաւ խօսեցիր: Երաբները միայն դրանով են յաղթել մեզ անշուշտ. և արդ, եթէ մեր աղբի գործերն ու վաղըները այդպէս է որ ասացիր, այլ ևս ինձ նրանց օգնութիւնը պէտք չէ. ուրե-

ն այլ այսպիսի «տրամեցնող» միջոցներ: Ցնցել-մարդկանց և ինչով—զրպարտութիւններով, սու-տերով և պառակաւան բամբասանքներով—անա-թէ ինչն է դարավերջի հրապարակախօսի ի-դէալը:

ԻՇԽԱՆ ԻԼԻԱ ՃԱՎԱՎԱՍԶԷ ՆԻ ՀԱՅԵՐԸ
VI

Գրիգոր Արծրունի շարունակեց այն, ինչ սկսել էր Սենկովսկու ժամանակ: Բայց հայ գիտնականների յանցանքները անմեռ են և Ար-ծրունուց յետոյ, ի հարկէ, դուրս կը գար մէկը, որ կը շարունակէր նրա արածը: Այդ մէկը ու-րիշ ոչ որ չէ, եթէ ոչ գինեւալ Քիչմիշի: Որ-քան ուզում էր զարմացէր,—բանը այսպէս է. իշխանը երբ մի բան վճռում է և մանաւանդ ստորագրում, նշանակում է, որ ուրիշ կերպ չէ կարող լինել: Ուրիշ ճար չը կայ. մի կերպ պա-հենք ծիծաղներս, հպատակվենք իշխանական վճռին:

Հանգուցեալ գինեւալ Քիչմիշի գրող էր և սոսկ պիւնտրական գրող, այդպէս էլ նա բաւա-կան յայտնի է ռուսաց գիտնական գրականու-թեան մէջ իր երկու աշխատութիւններով, ո-րոնցից մէկը վերջին ռուս-թիւրքական պատե-րագծի պատմութիւնն է, միւսը՝ Նադիր-Շահի արշաւանքների պատմութիւնը: Վերջերում նա գրում էր և վրաց թագաւորութեան վերջին տարիների պատմութիւնը, բայց չը կարողացաւ վերջացնել և աշխատութիւնը կիսատ-պատ էլ հրատարակվեց նրա մահից յետոյ: Այդպեղ հան-գուցեալ հեղինակը համարձակութիւն է ունեցել գրելու թէ Վրաստանը XVIII դարի վերջում ներկայացնում էր մի շարքված և ափը նետված նաւ: Համալսած է ծով ծով է լինում այս վկա-յութեան դէմ և նրա պարկապուղիը նորից հըն-չեցնում է այն միանման նուագը թէ Քիչմիշի չէ, Սենկովսկու և Արծրունու շարունակողն է, սուտ է խօսում, կողպտում է վրաց փաւ-ը: Եւ իշխանի «սարսկին» (սպառնացը) այն է, որ Արաստանը չէր կարող այնպէս լինել, քանի որ նրա թագաւորը Հէրակլ Ա էր:

Նադիր-Շահի պատմութեան մէջ, որ լոյս է տեսել 1889-ին, Քիչմիշի նոյն գոյնեւում է նը-կարագրել Վրաստանի դրութիւնը. ինչու այն ժամանակ իշխանը չէր բերում իր երեւելի «սա-րսկին», որպէս թէ Քիչմիշի կարողանար ան-ձամբ ցոյց տալ թէ տգիտութիւնը եթէ մարդուն համարձակութիւն է տալիս, բայց չէ կարելի ի չարը գործ դնել նրան: Հէրակլը քաջ, հայրենա-սէր թագաւոր էր—ոչ որ այդ չէ ուրանում. չէ ուրանում մանաւանդ գինեւալ Քիչմիշի, որ նկարագրում է թագաւորի յաղթութիւնները (օր. Ատրինձայում), նրա հերոսական կռիւը Արձա-նիսում: Բայց ինչ կարող էր անել այդ քաջ թա-գաւորը, երբ երկիրը դիմում էր դէպի անկում, չնորհիւ: Ներքին երկպառակութիւնների, որոնց միակ պատճառը վրաց աղնուկաններն էին: Այս դրութիւնը մանաւանդ մանրամասն կերպով նկարագրել է յայտնի կովկասագէտ և Պետեր-բուրգի Ակադեմիայի անդամ Գուրբովին: Պէտք է զարմանալ թէ ինչպէս է, որ Համալսած է Գուրբովինը էլ չէ հոչանում հայկական գոռու-դիւնի անդամ. չէ որ Գուրբովին պայցուցանում է, որ սարսկիների Աղա-Մանդ-Իսանի արշա-ւանքը այնքան չը վնասեց Վրաստանին, որքան երկրի ներքին դրութիւնը: Երկպառակութիւն-

մըն ես վճռել եմ, որ այս զօրքերը և զինուոր-ները իրանց երկիրները դարձնեն, իսկ ես առ-նեմ իմ ընտանիքս և ստացուածքս և հեռանամ Սիւրիայից գնամ Էսպոս, այսինքն Կոնստանդի-նիա. ես այնտեղ ապահով կապրեմ ինձ համար: Երբ ժողովուրդը լսեց կայսրի խօսքերը, շար-վեց նրա առաջ և ասաց. «Ով կայսր, ողջ կայ, այդ բանը մի անիւր և Մեսիայի կրօնը» մի խայտառակիր. դատաստանի օրը դու պա-տասխանատու կը լինես. և աշխարհի թագաւոր-ներն էլ քեզ կը պարսաւեն և կը նախատեն քո վաղը: Եւ երբ որ դու Սիւրիայի դրակտիցը դուրս գաս գնաս, մեր թշնամիները կը խրի-տանան մեր վրա և արաքները կը տրեւն մեր երկրին: Արդ, քանի որ այսքան զօրք ունենք ժողովված, որ ոչ մի թագաւոր երբէք այսչափ զօրքեր միասին դուստարած է եղել, մենք պա-տեւարդները արաքների դէմ. թերեւ Մեսիան օգնէ մեզ: Ուրեմն որոշիր առաջնորդել մեզ և մենք մտնենք դաշտը կռուենք արաքների հետ: Ասում են թէ Հերակլիտոս կայսրը ուրախացաւ նրանց խօսքերիցն ու քաջութիւնիցը և վճռեց, որ հինգ յոյն թագաւորների առաջնորդութեամբ կարծիք ու թիւրքաց հետ պատերազմներ արել իսլայի ոսկնուռ կերպակից էր և ծայրին մի իսլայ մարդարտաշար, և այդ զօրակը յանձնեց ռուսների Կանաթի թագաւորին և նրան տը-լաւ հարիւր հազար Սկիւթական հեծելազօրքեր,

ներ թագաւորի ընտանիքում, անբարեխղճու-թիւն, վատութիւն նրանց կողմից, որոնք պիտի միանային այդ սարսկիների փորձանքի ժամա-նակ: Առանձին անհատներ, առանձին խմբեր կարող էին հերոս հանդիսանալ, կուել առիւծ-ների պէս, բայց ինչ օգուտ դրանից: Պարսիկ-ները Քիչմիշից և ուրիշ տեղերից 13,000 զքեր տարան, իսկ իմէրէները, որոնք Հէրակլի դաշ-նակիցներն էին, կողպտեցին ամբողջ Քիչմիշը և 10000 զքերնք տարան (տես Գուրբովինի «Теория XII послѣднихъ царъ Грузіи», եր. 28): Հարցնում ենք բարկացած իշխանից. միթէ այս թւերը, այս իրողութիւնները Քիչմիշի վրա հարեց իրանից:

Բայց իշխանը միայն փաստերը ուրանալու մէջ չէ այդքան քաջ: Կայ աւելի մեծ յանցանք—անբարեխղճութիւն: Գինեւալ Քիչմիշի նկա-րագրել է, մի ակնատեսի ասածների հիման վրա, բանդված, աւերված Վրաստանի դրու-թիւնը: Այդ նկարագրութիւնից Համալսածէ մի կտոր է միայն դուրս գլում: Քիչմիշիում վրաց աղնուկանները ուղարկում էին իրանց ծառաներին, որոնք յափշտակում էին վաճա-ռողներից ուտելու միջոցներ: Վաճառողները, ի հարկէ, հայեր պէտք է լինէին: Եւ անս դար-ձեալ սուգ ու չիւան. իշխանը ասում է թէ վրացիների վրա այսպիսի զրպարտութիւնը դը-նում են այն մտքով, որ ցոյց տան թէ վրաց աղնուկանները աղբատ են, իսկ հայերը հա-րուտու: Եւ դարձեալ նոյն մեղադրանքը թէ հա-յերը խլում են վրացիներին հացը, դարձեալ երեւակայութիւն, հալւոցիւնացիաներ: Իշխանը այն աստիճան սրտաւռչ պարզութեան է հաս-նում, որ առանց այլ և ալրութեան ասում է. ինչ անենք որ վրացիները աղբատ են. Քիչու-տուն էլ աղբատ էր, բայց աշխարհը նրան հետեց:

Շատ պատկառելի նմանութիւն է: Բայց հար-ցը նրանում է, որ գինեւալ Քիչմիշի նկարագ-րութեան մէջ չը կայ հայ անունը: Ընդհակա-ռակն, նա ասում է որ այսպիսի վիճակի են-թարկված էին և գիւղացիները: «Կալուածատէ-րերը քանդում էին գիւղացիներին խլելով նը-րանց ձիերը, կովերը և հացը: Զրկվելով անա-ռուկներից, աշխատելու կարողութիւնից, գիւ-ղացիները խմբելով փախչում էին իրանց վայրերի-րից, լաւ համարելով, արեւել իրանց վայրերի-րից, քան մնալ տանը: Ինչու է իշխանը կուլ տուել այս կտորը:—Այն պատճա-ռով, որ գիւղացիները միայն հայեր չէին, այլ և մեծ մասամբ վրացիներ: Նշանակում է որ վրաց թագաւորները կողպտում և կեղեքում էին նոյն իսկ վրացի ժողովուրդը: Ինչպէս կուլ չը տայ այսպիսի հանգամանքը նա, որ այդ թա-գաւորի մի ժառանգ է: Բայց դա անբարե-խղճութիւն է, կասե՞ք դուք: Կարելի է և ան-բարեխղճ լինել, երբ պէտք է մի յայտնի միտք անցկացնել զօրով, երեւակայութիւն ոյժով: Եւ իրաւ, ուրիշ ինչ միջոցով ապացուցանել թէ վրացի իշխանները հայերի վերաբերմամբ աղ-բատ Քիչմիշի նմանութիւնն էին ներկայաց-նում: Գինեւալ Քիչմիշի նկարագրութեան մէջ երկրի ընդհանուր դրութիւնն է նկատու ունե-ցել, իշխանը Համալսածէ համաձայն չէ, որ մե-զանից հարիւր տարի առաջ այդպիսի բան եղած լինի. փաստեր հարկաւոր չեն, պէտք է միայն կտրել, գէն գցել այն, ինչ ձեռնուռ չէ յիշել:

Նրան զգեստաւորեց, մի գոտի անցրեց մէջքին ու մի բանախօսութիւն արաւ: Նրան ուղղված: Յետոյ մի ուրիշ զրօշակ պատրաստեց սպիտակ կերպակից, որի մէջտեղը կարմիր ոսկուց մի արեգակ էր փայլում: Նրա ծայրին էլ մի իսլայ կամ կանաչ գլորութիւն, և այդ զրօշակը յանձ-նեց ամօրեկներ և մեղրեկներ թագաւոր ձիւր-ձորին (Գրիգորին). սրան էլ զգեստաւորեց ու գոտիորեց և նրան տուաւ հարիւր հազար հեծե-լազօր Ֆերադեան և ուրիշ յոյներից: Նրանից զատուաւորեց և նրա ծայրին կարմիր ոսկուց մի իսլայ և յանձնեց Կոնստանդինիայի տէր Գերձա-նին. նրան էլ տուեց հարիւր հազար հեծելազօր-ներ մեղրիկից, ֆռանիկից և գլանից, և զգես-տաւորեց ու գոտիորեց նրան ոսկուց:

Զորորդ զրօշակը ըլլողը նոյնուց էր ընդե-լուզված մարդարտներով ու ակունքեղէնով: Նրա ծայրին մի իսլայ կար կարմիր յակնիկից և այդ զրօշակը յանձնեց հայաց թագաւոր Մասա-նին, որին նա մեծ սիրով սիրում էր, որովհետեւ նա քաջ էր և իմաստուն և արդէն շատ անգամ զրաւարել էր թիւրքաց հետ պատերազմներ արել ու յաղթել էր: Եւ երբ որ նրա զրօշակը պատ-րաստել էր, հաղթեց նրան այն զինուոր, որ կայսրը ինքը հազած էր, գոտիորեց նրան և մէջը մի սուր կապեց, որ միայն մեծ թագա-ւորներն են կապում: Յետոյ ասեւարաններով

և առաջ բերել, ծածկանել այն, ինչ առաւել-ների աղբիւր կարող է դառնալ բանաստեղծի սանձարձակ երեւակայութեան մէջ: «Այսպէս եմ ուզում», կանչում է նա ամեն մի տողից: Այն, իշխան, ճիշդ է, դուք այդպէս էք ու-ղում...

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱՔԻԼԻՍՍԱՅԻՑ
—

Մարտի 29-ին
Մի առանձին պատկաւանքով յիշում են մեր ծերերը, որ Ներսէս Առաքակեցին բառաւորական թակահարներն մեր կողմերից անցնելով, բաղաւ-ւորացրել է մեր գիւղը իր այցելութեամբ: Այն օրից կէս դար շարունակ մեր հայրապետներից և ոչ միւր առիթ չէ ունեցել անցնել Փամբա-կից, մինչև իսկ առաջնորդներ, յաջորդներ, հա-ղի են պատահում մեզ տեսնել: Բայց որքան փոփոխութիւններ պէտք է մտնի երկակողմից: Ամսիս 28-ին, կիրակի վաղ առաւօտեան հե-ռագիրը յայտնեց, որ Վեհափառ Կաթողիկոսը առանձին գնացելով, ժամը 12-ին, կը ժամանէ Ղարաբաղի յայտնաւոր: Նդանակը հրաշալի էր. երկու ժամ չանցած ամբողջ գիւղը ոտի վը-րա էր և 3000-ից աւելի մարդիկ, կանայք, մա-նուկներ, համախմբված կայարանի շուրջ՝ սըր-տատորփ սպասում էին Վեհափառի գալուտեան: Նա երկար չը սպասել չը տուեց: Ահա և աղե-զարդ Հայրապետը երեսաց արքայական պատըշ-գամբի վրա և իրան յատուկ պերճախօսութեամբ օրհներով, միթմարելով ժողովուրդին, ցաւակցու-թիւն յայտնեց, որ այս անգամ գիւղը մտնելու հարաւորութիւն չունի: «Երկու ամսից յետոյ, ասաց նա, դարձեալ անցնելու եմ այստեղից Սանահին երկաւու: այն ժամանակ մի քանի օր կը մնամ ձեր պատուական գիւղում և աւելի մօտից կը ծանօթանամ ձեզ հետ: Այն ժամից յետոյ խուռն բազմութիւնը ցնծութեան աղա-ղակներով ճանապարհ դրեց Վեհափառին դէպի Ալեքսանդրօպոլ:

Վեհափառ Կաթողիկոսին դիմաւորելու համար երեք օր առաջ Ղարաբաղիսա էր եկել մեր դա-ւաւոր յաջորդ վարդապետը. հայր սուրբը իր շնորհիւ բարոյներով միանգամայն գրաւեց ժո-ղովրդի սիրտը: «Իսկ շուրհին կերակուր է...» այս իմաստով խօսքերով էր կերպարում մեզ այս մեծ պատի օրերում բարոյզի հոչակ վայե-րող մեր առաջնորդներից միւրը. իսկ երկուս-սարդ հայր սուրբը իր թարմ, կենդանի մտքե-րով ոչ միայն մոռացնել տուեց այդպիսի անհե-թեթիւթիւնները, այլ և ցանկալի տպաւորու-թիւն թողեց մեզ վրա: Ոչ միայն բարոյզելու չնորհ ունի, այլ երևում է և գործելու եռանդ: Նա նկատելով որ մեր եկեղեցին հեռու է գիւ-ղից, շատ փոքր է և անշուք ժողովուրդի համե-մատութեամբ, իսկոյն ժողով կազմեց, որտեղ հասարակութիւնը ամենայն հաճութեամբ և սի-րով յանձն ատաւ ձեռնարկել եկեղեցու շինու-թեան: Այդ նպատակի համար արդէն 2000 ռուբլի նուէր ստացված է հանգուցեալ Յովհան-նէս Աթոկեանից: Վճռեցին Վեհափառի հաճու-թիւն ստանալով 6000 ռուբլի եկեղեցական գու-ւմարից ծախսելու, իսկ մնացածը՝ համաձայն հա-մախօսականի, կը հոգայ ժողովուրդը: Մնթա-ղքվում է մինչև 20,000 ռուբլի ծախս, մի գու-ւմար, որ շատ չնչին է մեր կրօնասիրների համար, եթէ միայն ցանկային փոքր ինչ ներդրու-թեան:

Առաջ. Ով Մասան, ես քեզ բոլոր զօրքերի գըլ-խաւոր հրամանատարն եմ նշանակում. քո հրա-մանիցը բարձր հրաման չը կայ, և ոչ քո դա-տաստանից վր դատաստան: Եւ յետոյ, դառ-նալով դէպի Վեհաթիւր, ձիւրձնոր, Գերձան ու Կուրին, որ զօրքերի զօրապետներն էին, ասեց. «Գիտացե՛ք, որ ձեր զրօշակները Մասանի դրօ-շակին ստորադատված են, և դուք նրան էք յանձնված. դուք մի բան չէք անի առանց նրա խորհրդի ու հաճութեան: Փնտնեցե՛ք, ման եկե՛ք, գտե՛ք արաքներին. մի վնասել, այլ պատերազ-մեցե՛ք ձեր հին կրօնքի և ձեր ուղիղ օրինաց համար. չորս դատ-դատ ճանապարհներով գնա-ցե՛ք, որովհետեւ եթէ մէկ ճանապարհով գնա՞ք, ձեզ համար և այն երկրի համար, որի միջով պիտի անցնէ՛ք, ներդրու՞նք կը լինի»: Միայն յետոյ պիւնտրական հաղուտ հաղց-րեց ձեռքէ-ձիւրէ-էլ-էլ-էլ էլ Դէսանիին և յանձ-նեց նրան քրիստոնեայ Արաբէլսան և Լէլամ ու ձգեց ցեղերի զօրքերը և ասեց նրանց. «Գուռ գնացե՛ք զօրքի առջևից, որովհետեւ ամեն մի ազգ իր ազգի միջոցով է կորել, և երկաթը միայն երկաթով կը կտրվի: Յետոյ հրամայեց, որ բանանները նրանց վրա սուրբ շուր սըրա-կին, և աղօթքներ անելով մահվան աղօթքն ան-գամ կարդացին,

Փարզմանեց Ա. Ամբրիսանայ

—Գերմանիայում հրատարակվեց մի քրո-
շիւր «Յաւերտնական» խաղաղութիւնն զերմա-
գորով, որը իր վրա ունի խաղաղութիւնն է դարձնում
միայն այն պատճառով, որ նրա հեղինակը,
պրոֆէսոր Ֆոն-Նորդհայմը, նշանակված է Գեր-
մանիայի պատուիրակ Հազարայի խաղաղութեան
կոնֆերանսիումում: Նորէնգել հաւատացնում է իր
քրոշիւրի մէջ, որ քրիստոնէութիւնը և եկեղեցին
պատրաստված անհրաժեշտութիւն են ընդունում,
որ պատերազմը քաղաքակրթութեան տարածողն
է և որ, նրա շնորհիւ, ծաղկում է արդիւնաբե-
րութեան մի շատ նշանաւոր ճիւղ: Նորէնգել իր
քրոշիւրի մէջ հետեւեալ եղբայրացութիւններին է
գալիս. 1) մշտական խաղաղութիւնը անհրաժեշտ
է և 2) նա ցանկալի չէ: Գերմանական մամուլի
նշանաւոր մասը դատապարտում է Նորէնգելի
գրութեանը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

5 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՐԳ: Ապրիլի 5-ին կատարվեց Բիչ-
կովի թաղումը: Պատարագին էր միտքայով
Անտոնով: Եկեղեցում ներկայ էին Մեծ Խլխան
Կոնստանտին Կոնստանտինովիչ և ուրիշ շատ
քարճարատիճան անձեր: Թաղումը տեղի ունե-
ցաւ Ալեքսանդրովսկի մենաստանի դերեզմանա-
տանը:

ԽԱՐԱՎՈՎ: Նահանգական դատարանը, քննե-
լոր անուական Նեկուսի գործը, որը մեղադր-
վում էր պորուչիկ Բոստոնովին մենամարտու-
թեան կանչելու մէջ, և որը մեղաւ ստացած
վերջից, վճռեց Նեկուսին դրկել մի քանի իրա-
ւունքներից և ենթարկել բերդարգելութեան եր-
կու տարով:

ԱՍՏԻՍԻԱ: Ապրիլի 4-ին կայացաւ առաջին
դպրոցական «ժամառանկութեան տօնը»: Մասնակ-
ցում էին մօտ 3000 երեխաներ:

ԲԵՐԼԻՆ: Երէկվայ առաւօտը կայսրը անց-
կացրեց Մօնրեխտի մէջ, որտեղ հրաւիրված էր
ուսուցիչ դեսպանը:

ՎԻԵՆԱ: Փառանքեց պարսից Շահի մեծ որդի
Մանսուր Միրզան:

ՊԱՐԻՑ: «Figaro» լրագրում տպված է Պիկա-
րի ցուցմունքների շարունակութիւնը: Համոզ-
ված լինելով այն բանի մէջ, որ այդ անիրաւ
Ծ ղօկումները ստացված է 1893 կամ 1894
թւին, նոյնպէս և նրա մէջ, որ դա չէ կարելի
վերադրել Գրեյֆուսին, ինչպէս և չէ կարելի
վերադրել նրան և գաղտնի «dossier», Պիկար
բացատրում է, թէ ինչպէս են հասցրել «բո-
ղբոս» միմիտորութեանը: Գործի քննութեան
ժամանակ Պատի-դէ-Ալամ ասեց Պիկարին, թէ
«բոլորեք» ձեռքը նման է իրանց ընկեր Բրո-
նի: Ետեւեւեւին նոյնպէս պատմում էր,
թէ այն անձը, որը իրան կապիտան Բրո էր
ցոյց տալիս, ձեռք է բերել գրութեան օրինակը:
Ապա Պիկար պատմում է դատի մասին, պաշ-
տօնադուրի անելու, Գրեյֆուսի բողոքների, «pe-
tit bleu» տառապար. մասին, որի ժամանակ այն-
կարծիքը յայտնեց, թէ ղօկումները մաքրել են
միմիտորութիւն ուղարկելուց յետոյ: Նոյն-
բերի 28-ին նիստի ժամանակ Պիկար ասեց,
թէ Էստէրնապիլի հետ ծանօթ չէր մինչև
«petit bleu» տառապար. թէ նա նրա մասին
տեղեկութիւններ ժողովեց և հրամայեց գաղտ-
նի ոստիկանութեան մէջ գործակալին, որ հետա-
մուտ լինի Էստէրնապիլին: Այդպիսով նրան յայտ-
նի եղաւ Էստէրնապիլի խախտող գրութիւնը:
Նրա անընդաւարտ վարձուքները Բազէլի
տեսակցութեան առիթով: Պիկար ասեց, որ
օտարերկրացի գործակալ Բ. Կ. մտադրութիւն
ունէր հաղորդել տեղեկութիւններ դաւաճանի
մասին, որը ունէր մայրիկ աստիճան. բայց
Լաուս և Հանրի պնդում են, թէ գործակալը
ոչինչ չէր ուզում ասել: Երբ որ նա լսեց, թէ Էս-
տէրնապիլի աշխատում է մտնել գլխաւոր շտաբը,
Պիկար անմիջապէս հաղորդեց այդ մասին Բուա-
դէֆրին և միմիտորին: Պիկար, որի մօտ գրտն-
վում են Էստէրնապիլի նամակները, հաստա-
տում է նրա ձեռքի նմանութիւնը «բոլորեք»
ձեռքի հետ, որից յետոյ ընկում է գաղտնի
«dossier», որտեղ գտան միմիայն մի նշանաւոր
ղօկումներ, որը կարելի է վերագրել թէ Էս-
տէրնապիլին և թէ Գրեյֆուսին: Պիկար աշխա-
տում էր հերքել «petit bleu»-ի վերաբերմամբ
իր վրա բարդած մեղադրանքները, վերագրելով
Հանրիին իր ղէմ հնարած բոլոր մեքենայութիւն-
ները: Հանրիի ու Էստէրնապիլի յարաբերու-
թիւնների մասին իրան ոչինչ յայտնի չէ: Պի-
կար նկատում է, որ գործի վերաբերմութեան
համար աղիտացիան սկսվեց այն րօպէից, երբ
նա կառված յայտնեց Բուադէֆրին: Պիկար մը-

տաբերում է, որ Բերտրիւն իրան ղգուչացնում
էր, թէ Գրեյֆուսի օգտին կը սկսվեն զանազան
մեքենայութիւններ:

ՄԱՐԻԻԻ: Հաւատարմութիւն է այն լուրը, թէ
միմիտորութեան գործակալները և օտարախո-
տական թէկնածուները մէջ ընդհարումներ են տե-
ղի ունեցել Բիլթաուսում, որտեղ վերաւորվել են 13
մարդ: Կադիկուսում տիրում է մեծ յուզմունք: Եր-
կու են կրում անկարգութիւններից զաւառնե-
րում: Հաւանական է, որ միմիտորական կուսակ-
ցութիւնը մեծամասնութիւն կունենայ:

ԿԱԼԵՍԻԱ: Կայսրը ու կայսրուհին երեքշաբթի
կուղեւորվել Սասուրի. ինչ վերաբերում է Ֆրան-
սիական նաւատորմին, նա այդ օրը կը գնայ
Տուլոն:

6 ապրիլի

ՎԻԵՆԱ: Կայսրը, կէսօրից յետոյ, այցելու-
թիւն գործեց պարսից պրինցին, որ իջել էր
պարսկական դեսպանատանը:

ՀՕՆԿՈՆԻ: Անգլիական դրօշակ երէկ, կէսօ-
րից յետոյ, բարձրացրեց Տայցուֆուլում: Մի
պատգամաւորութիւն նոր երկրի ազգաբնակու-
թեան կողմից գնաց նահանգապետի մօտ՝ ցա-
ւակցութիւն յայտնելու: Նորբա տեղի ունեցած
անկարգութիւնների համար և յանձնելու նրան
մետաքսէ դրօշակը:

ՄԱՐԻԻԻ: Ընտրութիւնները վերջացած են:
Ընտրվեցին 5 պահպանողականներ և 3 ազատ-
վականներ:

ՄԱՐԻԻԻ: Ընտրված են՝ Սիլվէստր 180
կուսակիցներ, Պոլալէսի 33 կուսակիցներ, 30
անդրեւեռականներ, 18 տէպուանովներ, 36 ա-
զատամիտներ, Գամադի 30 կուսակիցներ, 15
հանրապետականներ, Բոլթրօի 5 կուսակիցներ և
4 կարլիստներ: Նոր պատգամաւորների ժողովի
կազմակերպութիւնը շատ զանազանաբայն է
համարվում:

ՆՕՎՕԶԵՐԿԱՍԿ: Նօվօզերկասկի մօտ գտնվող
այգիներում երեսցել են խիստ շատ մկներ,
որոնք ոչնչացնում են պտղատու ծառերի և խա-
ղողի արմատները՝ ահագին վնաս պատճառելով:

ՀՕՆԿՈՆԻ: «Fame» ականաւոր հօնկոնգեսան
գնդի 100 մարդկանցով երէկ գնաց նոր երկրը
և հանգիստեց այնտեղ չինական 1000 զինուորնե-
րին, որոնք լաւ դիրք էին զբաղել Տայցուֆուլի
վրա տիրուպետող ըլուրների վրա: Չինացիները
սկսեցին հրացանաձգութիւն և թնդանօթաձու-
թիւն, բայց անպիտաններին վնաս չը պատճա-
ռեցին: «Fame» սկսեց ուժեղանալ չինացիներին,
որից յետոյ հօնկոնգեսան գնդի զինուորները յար-
ձակում գործեցին չինացիներին վրա և փախուստ
դարձրին նրանց: Ենթադրում են, որ չինացինե-
րից սպանվել են մի քանի հոգի:

ՊԱՐԻՑ: Տօրինէ-սիր-Վերում փվեց հացի
բօրայի ճակատը: Աւերակներից առ այժմ 4
դիակներ են հանված. շատ վերաւորվածներ կան:

ՊԱՐԻՑ: Եվէդական թագաւորը այցելութիւն
գործեց Լուբէին: Թագաւորին զինուորական պա-
տիւներ արվեցին: Թագաւորութիւնը տեղ 20 րօ-
պէ: Լուբէ հրաւիրեց թագաւորին վաղը նախա-
ճաշի: Նախ քան գնալը, թագաւորը ցանկու-
թիւն յայտնեց ներկայանալու տիկին Լուբէին:
Մի քանի րօպէից յետոյ նախագահը այցելեց
թագաւորին:

Թագաւոր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԱ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տպագրութեան է յանձնված

ԿԱՐԻԼ ԳԼԱՄՄԵՐԻՈՆԻ
ՈՒՐԱՆԻՆ

Նշանաւոր աստղագիտական վէպը, 366 էջ
թարգ. Հ. Առաքելեանի

Բացված է այժմ բաժանորդագրութիւն —
1 րուբլի: Տպագրութիւնից յետոյ գինը կը
լինի 1 ր. 50 կ.: Բաժանորդ գրվել ցան-
կացողները մինչև սեպտեմբերի 1-ը պէտք
է յայտնեն, ուղարկելով 1 րուբլի այս
հասցեով, Քիշլի, Հրատ. Ընկ. գրասենեակ,
Գալուստ Գալստեանցին: (չ.) 2—10

ԿԱԶԱՆԻ

ԱՍԱՄՆԱՐՈՒԺԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Խնդիրների ընդունելութիւն բժշկապետ
Օ. Ն. Նատանսոնի անունով 1899 թւի
մայիսի 15-ից: (ո.) 2—3

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՐՈՒ ՀԻՒՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԻԵԱՆԻ

(Կուկիա, Վ. օրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են աւելի օր, բայց
կիրակի օրերից:

ԱՌԱՌՈՑՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԻԵԱՆ—11—12 ժ. վերաբու-
ժութեան, վերնբալան (սիֆիլիս) և միզատու. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆ—9—10 ժ. աչքի, ներքին
և նեարդալին հ.

Չ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—11—12 ժ. կանանց
հիւանդ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի,
կուրդի, ըթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և
երեսայն հ.

Ա. Գ. ԳՈՐԿԻՆ—1½—2½ ժ. ներքին և մի-
ասեռական հ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Վ. Մ. ՄԱՍԼՈՎԱՆ—5—6 ժ. ներքին և երե-
կայն հ.

Ա. Ն. ՇՊԱԿՈՎԱՆ—6—7 ժ. նեարդալին (ե-
րկարաբուժութիւն), վերնբալան և մոթի հ.

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԻԵԱՆ—6½—7 ժ.

Տ. Ի. ԲՈՒԿԵՆԿՈ Տիւանդանոցում քիմիական
և խոշորացուցական հետազոտութիւններ է ա-
նում մէկի, խիլի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համալսարնոյի
(կոնսերվում) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերանորոգ.
121—150 Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԻԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Վարչութիւնը յայտնում է, որ
ընկերութեան Բաղուի անդամները իրանց հասանելի գրքերը կարող են ստանալ աշ-
խատակից անդամ պ. Աստ. Վաչեանից (Պատաս Ծահգեղանեանցի):

3—5

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԵՐՁՈՒԹԻՒՆԸ

Երեսնում է, որ տարիլի 10-ին, ժամը 1-ին, Գաղաքային Վարչութեան տան մէջ լի-
նելու է՝ աշուրդ կապալով տալու քաղաքապետան մի կտոր հող, որ գտնվում է X-դ
քաղաքամասում, նոր մաքսատան հանդէպ, և որը պարունակում է իր մէջ 600 բառ.
սաժէն, փայտի և շինութեան փայտեղէնի պահեստի համար: Պայմանները կարելի է
տեսնել Վարչութեան մէջ ամեն օր:

2—3

ԵԾՈՆ, ԼՍԻ ԵՒ ԺՇՇԵԿՈՎ

ՎԻԷՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ

Գօլով. պրօսպէկտ, I-ին զինադիւղի հանդէպ:

Ստացված է մեծ քանակութեամբ տղամարդկանց և երեխանե-
րի դարնանային և ամառվայ պատրաստի հագուստներ: Գները է-
ժանութեան և ապրանքի լաւութեան մասին. պ. պ. գնողները կա-
րող են համոզվել, անձամբ յաճախելով մեր խանութը:

2—10



ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵՏԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՒՅԻ ատենանում՝ սոյն
ապրիլի 9-ին, նշանակված է աշուրդ, առանց կրկնաձրի, վարձու տալու ու էջմիածնի
կառուածը վերին յարկը, որ գտնվում է Պուշկինեան փողոցի վրա, 5-րդ քաղաքամա-
սում: Պայմանները մասին ծանօթանալ Կոնստանտինայի ղիւստանանը:

Անդամ Կոնստանտինայի՝ Գրիգոր աւագ բահանայ Տէր-Բարսեղեանց
(չ. ե. հ.) 3—3

Կենտրոնական գրախանութանոցը

բաց է անում բաժանորդագրութիւն

Վ. ՓԱՓԱՋԵԱՆԻ

»ԵՄՄԱ«

ընդարձակ վէպի համար, որ կը բաղկանայ 350—400 խոշոր երեսներից: Վէպի նիւթը եւրօպա-
կան հայ ուսանողների, այլ և մեր ներկայ հասարակութեան կեանքից է: Բաժանորդագրութիւնը
արժէ 1 րուբլի, իսկ զիջքը յոյս տեսնելուց յետոյ կարժենայ 1 ր. 50 կ.: Բաժանորդագրութիւն
ընդունվում է մինչև մայիսի 1-ը: Բաժանորդագրութեան համար դիմել Կենտրոնական գրախան-
անոց: Тифлисть, Центр книжн. торг. Արտասահմանից՝ Librairie Centrale. Tiflis.
(չ.) 10—10



4—52

(չ.)